ՂԳ.

Լուսաւորչայ ժամն չինեցին. ողորմութիւն ժողվելու համար չեն խօսիր,... Լուսաւորչա ժամն խիստ պայծառ եղաւ. երկու քովը քար է, օրթան քավկիր որ ստամպօլու մէջը անանկ ժամ չիքայ. 120 քէսէ ստակ գնաց պէլքի. 80 քէսէն զապիթները կերան. ասօր կօրէ ողորմութիւն կը ժողվեն...: Եթէ ըստամպօլու էհվալը հարցանես սղութիւն է. 60 տրէմ հացը մէկ ըստակ է. չէ թէ ցորէն չի կայ. ցորէն գոհութիւն Աստուծոյ շատ է. նահաթի տաճիկը անիրաւացաւ. օչխարի միսն 6 փարա. ան ալ առատութիւն չունի. խուզին եօթ փարա, ան ալ գլօխը ճիերըն հետ է. քանի կերթա ըստամպօլ գէշ կլա աղէկ չիլար: (Տիրացու Վարդան առ Հ. Պետրոս [Կ. Պոլսեցի Նուրոուվեան]. յաւիտն 1733 Մայիսի 28. [Կ. Պոլիս]):

ՂԴ.

Աստ զմիսն իբրև զձուկն համարելով անխտիր ունեն, և զձուն իբրև զձիթապտուղ վարկելով համարձակաբար ուտեն: Եւ ի սկզբան պասին յաւուր հինգշաբաթի սկսան բազումք ուտել զկովու և խոզու միս, և այսոքիկ զորս կերին էին տուտէլք և ոչ չօքսաներն, այսինքն լաթինք, զի սոքա ոչ միայն ոչ ուտեն զմիս, այլ և բազումք զձուն ևս ոչ ուտեն. իսկ ի հայոց յայլում պասոջ ոմանք կերեալ իցեն միս, և ոմանք զձուն. բայց յայսմ պասիս ոչ ոք ի հայոց եկեր զմիս, այլ սակաւ ոմանք կերին զհաւկիթ, իսկ ես զարապուչա հնտեղէն ուտելով, ևս և ընկուզ, գրեթէ բոլորովին չորացայ, կանաչեղէն ոչ գտանի այժմ, ձուկն այնքան լաւ չէ: (Եղիա վարդապետ առ Մխ. Աբբայ, յաւիտն 1733 մարտի 23. [Պելկրատ]):

ՂԵ.

Գիտեմ զի վասն հաշտութեան թագաւորաց քրիստոնէից աղօթէք, սակայն խնդրեմ զի շարունակիցէք, և մանաւանդ վասն առողջութեան և բարձրացուցման անուան մերոյս կայսերն, տէր Ցիսուս ինքեան արու զաւակ պարգևեսցէ, և այլն. շահ Թահմազղուլի խանն տակաւին ոչ է հաշտութիւն արարեալ ընդ թուրքաց, նա և ոչ առնէ և զոր ինչ ասեն ի կողմանէ հաշտութեան սուտ է. և զօրքն մոսկօֆու տակաւին ի ներքոյ տանծկայու է: Լէհու էլչին գնաց ի ստամպօլ: (Եղիա վարդապետ առ Մխ. Աբբայ, յաւիտն 1734 մայիսի 7. [Պելկրատ]):

ՂԶ.

Թոմա գմբեցին փրոբականթան ըսկըսեցան տըպել արապի, յառաջ քան աւարտիլն եթէ գտանիցեմ այլ առնելոց եմ, եթէ ոչ սպասեմ, ի յաւարտիլն նոր տպագրածին առնելոց եմ, խնդրեմ որ այս արապի գրգերն իբրև զլոմափողն ընդունիս յիշատակ... գերյարգելի յարութիւն արհի եպիսկոպոսին ողջոյն մատուցանեմ: (Սուքիաս եպիսկոպոս առ Մխ. Աբբայ, յաւիտն 1734 մայիսի ԺԵ. [Հռոմ]):

ՂԷ.

Ի վերոյգրեալ այս ամին [1734] և ի յուլիսի ամսոյ հնգին վճարի մնալն իմ աստ լման Ե ամն, ի յօրէ յորմէ մտեալ եմ աստ: Որոյ վասն գրեմ, այսինքն օրէնն է ստորագրելոցն ծանուցանել մեծաւորին իւրոյ, զի եթէ պիտոյ իցեմ և հաճութիւն վեհիդ, գրիցէ աստ եղեալ վերապատուելի տէր Մինասի Խնկանոսեան որ աստ վարդապետ ևս յորջորջի, նաև հաստատեցաւ ի տեղւոյս եպիս-